ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Անուշ Մեժլումյան, ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության եկամուտների քաղաքականության և հարկային վարչարարության մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ.

2. Գործուղման վայրը և ժամկետները.

ք. Տակաոկա և ք. Տոկիո, Ճապոնիա , 2023 թվականի սեպտեմբերի 4-ից 8-ը ներառյալ.

3. Հրավիրող կողմը.

Ասիական զարգացման բանկ.

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

«Անշարժ գույքի հարկի կառավարման բարելավում՝ տեղական եկամուտների ավելացման նպատակով» թեմայով ռազմավարական աշխատաժողովի նպատակն էր ծանոթանալ, մասնավորապես, Ճապոնիայի անշարժ գույքի հարկի հարկման առանձնահատկություններին.

5. Քննարկված թեմաները.

Դասընթացի ընթացքում, մասնավորապես, քննարկվել են հետևյալ թեմաները.

1) Անշարժ գույի հարկի հարկման օբյեկտը, հարկման բազաները, հարկ վճարողները, անշարժ գույքի հարկի դրույքաչափերը, վճարման ժամկետները Ճապոնիայում,

2) Ճապոնիայի անշարժ գույքի հաշվառման համակարգում անշարժ գույքի հարկ վճարողների, ինչպես նաև անշարժ գույքերի վերաբերյալ ներառվող տեղեկատվության առանձնահատկությունները.

3) Անշարժ գույքերի գնահատման առանձնահատկությունները Ճապոնիայում,

4) Անշարժ գույքի հարկման առանձնահատկությունները Ճապոնիայում,

5) Գյուղական, ինչպես նաև քաղաքային բնակավայրերի գույքերի կառավարման մասով Ճապոնիայի փորձի ներկայացում,

Scanned with CamScanner

6) Անշարժ գույքի հարկի մասով սահմանված արտոնությունները, ինչպես նաև անշարժ գույքի հարկից սահմանված նվազեցումները Ճապոնիայում,

7) Անշարժ գույքի հարկի հավաքագրման նպատակով անշարժ գույքի հաշվառման, գնահատման խնդիրների, ինչպես նաև համայքային մակարդակով վարչարարության իրականացման սահմանափակ հնարավորությունների վերլուծություն,

8) Մի շարք երկներում անշարժ գույքի հարկի հարկման առանձնահատկությունները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հնգօրյա աշխատաժողովի ընթացքում հանդիպումներ և քննարկումներ են տեղի ունեցել Ասիական զարգացման բանկի, Համաշխարհային բանկի մասնագետների, Տակաոկա և Տոկիո քաղաքների տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների և մի շարք ասիական երկրների մասնագետների հետ:

Աշխատաժողովի ժամանակ հանդիպումները և ելույթներն իրականացվել են քննարկումների, բանավեճերի տեսքով, որոնց ընթացքում պարզաբանվել են մի շարք ասիական երկրներում անշարժ գույքի հարկի հարկման և անշարժ գույքերի գնահատման առանձնահատկություններն ու խնդիրները:

Մասնակիցների կողմից ներկայացվել են մի շարք երկրներում գործող անշարժ գույքի հարկման, անշարժ գույքերի գնահատման առանձնահատկությունները, առկա խնդիրները և դրանց լուծման հնարավոր ուղիները: Մասնավորապես, Տակաոկա և Տոկիո քաղաքների տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների կողմից առավել մանրամասն (օրինակներով) ներկայացվեցին անշարժ գույի հարկի հարկման և անշարժ գույքերի գնահատման առանձնահատկությունները, ներկայացվեց գույքերի գնահատման GIS տեխնոլոգիաների առավելությունները անշարժ գույքերի բացահայտման և գնահատման գործընթացում:

Մասնակիցների կողմից ներկայացվել են նաև շնորհանդեսներ կոնկրետ երկրների օրինակներով, որոնք վերաբերվում են անշարժ գույքի հարկման, անշարժ գույքերի գնահատման առանձահատկություններին, ինչպես նաև ներկայացվել են կոնկրետ երկրում առկա անշարժ գույքերի հարկման մասով առկա խնդիրները, դրանց հաղթարման ուղիները (օրինակ, անշարժ գույքի հարկի բարեփոխումներ): Ներկայացվել է նաև Հայաստանի Հանրապետությունում 2021 թվականի հունվարի 1-ից գործող՝ անշարժ գույքի հարկի մասով սահմանված կարգավորումները, ինչպես նաև անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված

Scanned with CamScanner

կադաստրային գնահատման կարգը սահմանող օրենքով սահմանված կարգով անշարժ գույքերի գնահատման առանձնահատկությունները:

Ընդհանուր առմամբ աշխատաժողովը բավականին հետաքրքիր էր՝ հարուստ այլ երկրների փորձով, վերլուծություններով և դրանց վերաբերվող տեղեկատվությամբ: Աշխատաժողովի արդյունքում անշարժ գույքի հարկի և անշարժ գույքի գնահատման մասով ստացված այլ երկրների փորձը կօգտագործվեն << ֆինանսների նախարարության կողմից իրականացվող հետագա աշխատանքներում:

Աշխատաժողին կազմակերպվել է նաև խմբային աշխատանք և յուրաքանչյուր մասնակից երկրի ներկայացուցիչների կողմից պատրաստվել ու ներկայացվել է շնորհանդես անշարժ գույքերի արդյունավետ հարկման հնարավոր խնդիրների և դրանց հաղթահարման ուղիների վերաբերյալ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Աշխատաժողովի ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ծանոթանալով տարբեր երկրներում իրականացվող անշարժ գույքի հարկի հարկման, ինչպես նաև անշարժ գույքերի գնահատման առանձանահատկություններին՝ առաջարկում եմ քննարկել և տեղայնացնել դրանց լավագույն միջազգային փորձերն ու արդի գործիքակազմերը՝ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող անշարժ գույքերի արդյունավետ հարկման համակարգի ներդրման համատեքստում, քանի որ լավագույն փորձի դիտարկումն առաջնային կարևորություն ունի արդյունավետ քաղաքականություն մշակելու և իրականացնելու առումով:

Ստորագրությունը, ամսաթիվը:

13.09.2023թ.

Scanned with CamScanner